ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Հասմիկ Գրիգորյան, ՀՀ ֆինանսների նախարարության բյուջետային գործընթացի համակարգման վարչության հանրային իշխանության առանձին մարմինների գծով բյուջետային ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ.

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ք. Հաագա (Նիդերլանդների Թագավորություն), 2024 թվականի հունիսի 23-29-ը:

3. Հրավիրող կողմը.

Նիդերլանդների Թագավորության ֆինանսների նախարարություն.

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

«Պետական ֆինանսների կառավարում /Public Financial Management» թեմայով ամառային դասընթացի նպատակն էր Նիդերլանդների Թագավորության օրինակով քննարկել հանրային ֆինանսների կառավարումը, զարգացնել և խորացնել գիտելիքները հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ:

5. Քննարկված թեմաները.

Դասընթացի ընթացքում, մասնավորապես, քննարկվել են հետևյալ թեմաները.

1) Հարկաբյուջետային քաղաքականությունը Նիդերլանդներում,

2) Բյուջետային ենթակառուցվածքներ,

3) Ֆինանսների կառավարումը ճյուղային նախարարություններում,

4) Ծախսերի վերանայումներ,

5) Բյուջետային գործընթացի խթանում,

6) Պառլամենտի դերը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Դասընթացի ընթացքում առանձին հանդիպումներ և ելույթներ նախատեսված չէին:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացի ընթացքում ձեռքբերված գիտելիքները և Նիդերլանդների Թագավորության հանրային ֆինանսների կառավարման ուսումնասիրությունը լայն հնարավորություն ստեղծեցին ծանոթանալու միջազգային լավագույն փորձին, որոշ կարգավորումների մասով քննարկելու դրանք ընթացիկ աշխատանքներում կիրառելու նպատակահարմարության հարցը:

Ստորագրությունը, ամսաթիվը:

02.07.2024թ.